Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004թվականի նոյեմբերի 8-ի N143Ա որոշմամբ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեությունն իրականացնելու

Պայմանները

(Լիցենզիա №0145, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004թ. նոյեմբերի 8-ի №143 Ա որոշմամբ)

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր կամ Համակարգի օպերատոր՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Էլեկտրաէներգետիկական շուկայի կանոններ կամ Շուկայի կանոններ՝ այնպես, ինչպես ձ ևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությանը տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը սույն լիցենզիայով սահմանված պայմաններով իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն.

Լիցենզավորված անձ՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն.

Լիցենզավորված անձին վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն՝ այնպես, ինչպես ձևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Ներդրումներ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ օգտակար և օգտագործվող ակտիվների մեծացմանը կամ փոխարինմանը.

Սակագին՝ էլեկտրական էներգիայի և (կամ) հզորության միավորի վաճառքի, էլեկտրաէներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար (բացառությամբ կառուցման կամ վերականգնման և արտահանման գործունեությունների) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանված գինը.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նա և սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2.1 Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2004 թվականի նոյեմբերի 8-ից:

2.2 Լիցենզիան տրվում է 15 տարի գործողության ժամկետով:

3. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու տարածքը

3.1 Լիցենզավորված անձը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեությունն իրականացնում է սեփականության իրավունքով անհատույց իրեն փոխանցված հողատարածքներում (ք. Հրազդան, Գործարանային փողոց), որոնց վրա տեղաբաշխված է Լիցենզավորված անձի գույքային համալիրը:

4. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու էներգակայանքներ

4.1 Լիցենզավորված անձն էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեությունն իրականացնում է N1 հավելվածում նշված էներգակայանքներով:

5. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

5.1 Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է արտադրելու էլեկտրական էներգիա (հզորություն) և այն վաճառելու Շուկայի կանոններով:

5.2 Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որ և է իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավադրել կամ փոխանցել մեկ այլ անձի:

5.3 Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նա և Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

6. Լիցենզավորված գործունեության պայմանները

6.1 Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 4-ին վավերացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող «Հրազդանի ՋԷԿ»-ի գույքային համալիրը Ռուսաստանի Դաշնությանը ի սեփականություն փոխանցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջ և կազմված արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն), «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Լիցենզիայի, Շուկայի կանոնների, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջներին:

6.2 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

6.3 Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ էներգետիկայի բնագավառում մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նա և վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

6.4 Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որ և է այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով: Սույն կետում նշված որ և է հիմքով Հանձնաժողով դիմելու դեպքում Հանձնաժողովը համապատասխան որոշում է կայացնում 60 օրվա ընթացքում:

6.5 Լիցենզիայի 6.3 և 6.4 կետերի և Արձանագրության 1-ին հոդվածի 3-րդ կետի միջ և հակասությունների դեպքում գործում է Արձանագրության համապատասխան կետը:

6.6 Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

6.7 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

6.8 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարման ուղղված միջոցառումները Լիցենզավորված անձն իրականացնում է Հանձնաժողովի հաստատած փուլային ծրագրով և ժամանակացույցով: Հաստատված ծրագրի իրականացման ընթացքում դրանցում ներառված սարքավորումների տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի պահանջներից շեղումները չեն համարվում այդ նորմերի խախտումներ:

6.9 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգակայանքների մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

6.10 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից և ներառվում Սակագնում:

6.11 Լիցենզավորված անձը, ներդրումներ կատարելու մտադրության դեպքում, պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել զարգացման ներդրումային ծրագրերը՝ Սակագնում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

6.12 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի և Սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները:

6.13 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով:

6.14 Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

6.15 Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

6.16 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:

6.17 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

6.18 Յուրաքանչյուր տարի՝ մինչ և մայիսի 30-ը, Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերին համապատասխան մամուլում հրապարակել նախորդ տարվա իր ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

6.19 Յուրաքանչյուր տարի Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ և աուդիտորական եզրակացության պատճենը ներկայացնել Հանձնաժողով:

6.20 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը):

6.21 Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, կարող է հայտ ներկայացնել գործող Սակագնի վերանայման վերաբերյալ:
Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր կողմից սահմանված կարգով կարող է վերանայել գործող Սակագինը: Սահմանված Սակագինն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո: Սակագնի գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ Լիցենզավորված անձը խախտում է Լիցենզիայի պայմանները:

6.22 Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականացնում է ըստ Սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապատասխան հոդվածների (ուղղությունների): Ծախսերի ուղղությունների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը համապատասխան հիմնավորումներ է ներկայացնում Հանձնաժողով:

6.23 Համաձայն Արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին կետի, Հանձնաժողովը Շուկայի կանոններով սահմանում է այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն լիարժեք (100%) վճարում Հայաստանի Հանրապետության ներքին սպառման համար առաքված էլեկտրական էներգիայի և հզորության դիմաց՝ համաձայն էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրերի:

6.24 Հանձնաժողովը Սակագնի հաշվարկներում հաշվի է առնում միայն լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը:

6.25 Համաձայն Արձանագրության 7-րդ հոդվածի 2-րդ կետի, Հանձնաժողովը երաշխավորում է Լիցենզավորված անձին կամ նրա իրավահաջորդներին Սակագնի մակարդակ, որը հիմնական միջոցները աշխատունակ վիճակում պահելու պայմաններում թույլ կտա ապահովել գույքային համալիրի ձեռք բերման արժեքի՝ 31.0 միլիոն ԱՄՆ դոլարի վերադարձը, հաշվի առնելով սղաճը, ոչ ավելի, քան 15 տարվա ընթացքում՝ առանց ներառելու արտահանման եկամուտները: Ընդ որում, արտահանումից ստացված շահույթի մինչ և 50%-ը օգտագործվում է Լիցենզավորված անձի կամ նրա իրավահաջորդների կողմից՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցնելով: Գույքային համալիրի արժեքի վերադարձի աղբյուր են հանդիսանում Սակագնում հաշվի առնված շահույթը և մաշվածությունը:

6.26 Համաձայն Արձանագրության 7-րդ հոդվածի 3-րդ կետի, Սակագնի հաշվարկի մեթոդոլոգիական հիմք է հանդիսանում երկդրույք Սակագինը, որն ապահովում է

հաստատուն և փոփոխական ծախսերի հատուցումը՝ ներառյալ շահույթը: Շահույթի հաշվարկման բազան որոշվում է զուտ ակտիվների և շրջանառու միջոցների արժեքի գումարով, որոնք համաձայնեցված են Հանձնաժողովի հետ: Զուտ ակտիվների գումարը որոշվում է որպես գույքային համալիրի ձեռք բերման և օգտակար օգտագործվող ակտիվներում Ներդրումների գումար:

Գույքային համալիրի ձեռք բերման արժեքի (31.0 միլիոն ԱՄՆ դոլար) վերադարձից հետո, հաշվի առնելով լրացուցիչ Ներդրումները, Լիցենզավորված անձի կամ նրա իրավահաջորդների գործունեության կարգավորումը իրականացվում է ընդհանուր հիմունքներով:

6.27 Համաձայն Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետի, Լիցենզավորված անձը իրավունք ունի տնօրինել լրացուցիչ շահույթը, որը ստացվել է սեփական ռեսուրսների հաշվին ծախսումների տնտեսման արդյունքում՝ առանց այդ հատվածում գործող Սակագնի վերանայմանը:

6.28 Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջ և կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում սահմանված կարգով գրանցվելու պահից:

6.29 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի համաձայնության իրավունք չունի զբաղվել այլ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեությամբ:

6.30 Լիցենզավորված անձը բանկային հաշիվներ բացելու, տեղափոխելու կամ համանման այլ փոփոխություններ իրականացնելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Հանձնաժողովին:

6.31 Լիցենզավորված անձը պարտավոր է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Շուկայի կանոններին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ կատարել Համակարգի օպերատորի հրահանգները (կարգադրությունները):

6.32 Լիցենզավորված անձը պարտավոր է Շուկայի կանոններին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ:

6.33 Լիցենզավորված անձը պարտավոր է բոլոր գնումները, ներառյալ՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը, իրականացնել գնումների իրականացման կարգին համապատասխան, որը Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Լիցենզավորված անձի ներկայացմամբ հաստատում է Հանձնաժողովը:

6.34 Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ իր կողմից արտադրվող և ներքին սպառման հաշվեկշռի մեջ հաշվառվող էլեկտրական էներգիայի և հզորության ծավալների

նվազեցմանը հանգեցնող միջոցառումների պլանները Լիցենզավորված անձը պետք է համաձայնեցնի Հանձնաժողովի և Համակարգի օպերատորի հետ ոչ պակաս, քան միջոցառումներն սկսելուց 18 ամիս առաջ:

6.35 Լիցենզավորված անձը պարտավոր է Համակարգի օպերատորի հետ համաձայնեցնել իր հիմնական սարքավորումների հաջորդ տարվա նորոգումների ժամանակացույցը՝ համաձայն Շուկայի կանոնների:

6.36 Լիցենզավորված անձի կողմից առաքված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառումն իրականացվում է շուկային ծառայություններ մատուցող համապատասխան լիցենզավորված անձի կողմից՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

6.37 Լիցենզավորված անձի ներկայացրած դիմումի վերաբերյալ բացասական որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը նրանում պետք է նշի մերժման պատճառները: Լիցենզիայում կամ Հանձնաժողովի սահմանած կարգերում նշված ժամկետներում Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձի դիմումին չարձագանքելու դեպքում այն համարվում է ընդունելի: Եթե Լիցենզիայում կամ Հանձնաժողովի սահմանած կարգերում Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձի դիմումին արձագանքելու ժամկետ սահմանված չէ, ապա այդպիսի ժամկետ է համարվում 60 օրը:

6.38 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. Լիցենզավորված գործունեության վերահսկում

7.1 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

7.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պետք է համագործակցի Հանձնաժողովի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչիների հետ և աջակցի նրանց:

7.3 Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նա և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

7.4 Հանձնաժողովը, տեղյակ պահելով Լիցենզավորված անձին, Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, իր սահմանած կարգով և ժամկետներում, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ, իր կողմից ընտրված անկախ փորձագիտական ընկերության կամ անկախ փորձագետների միջոցով կարող է իրականացնել Լիցենզիայի պայմանների կատարման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում: Ուսումնասիրության և ստուգման ծախսերը ներառվում են Լիցենզավորված անձի Սակագնում: Լիցենզավորված անձի Սակագնով այդ ծախսերի փոխհատուցումը կարող է լրիվ կամ մասնակիորեն չիրականացվել, եթե ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ Լիցենզավորված անձը սխալ տվյալներ է ներկայացրել Հանձնաժողով կամ Հանձնաժողովից տվյալներ է թաքցրել:

8. Տուգանքներ, Լիցենզիայի կասեցում և Լիցենզիայից զրկում

8.1 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տույժերը.

ա) Նախազգուշացում,
բ) Սակագնի նվազեցում,
գ) Լիցենզիայի կասեցում,
դ) Լիցենզիայից զրկում:

8.2 Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.3 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նա և Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչ և Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշման կայացումը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:

8.4 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 8.1 կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետ կապված են:

9. Լիցենզիայի պայմանների փոփոխություն, Լիցենզիայի կորստի դեպքում Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրում

9.1 Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

9.2 Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

9.3 Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում կատարված փոփոխությունների հետ կապված առաջացած Լիցենզավորված անձի լրացուցիչ ծախսերը և (կամ¤ իրական (հիմնավորված) վնասները ներառվում են Լիցենզավորված անձի Սակագնում:

94 Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի (հասցեի) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հայտ ներկայացնել Լիցենզիայի վերաձևակերպման համար:

9.5 Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում Հանձնաժողովին ծանուցագրով տեղեկացնում է իր հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9.6 Լիցենզավորված անձի բաժնետերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է դիմել Հանձնաժողով՝ Լիցենզիայում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

9.7 Լիցենզիայի կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման ընթացակարգը կարգավորվում է Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

10. Այլ պայմաններ

10.1 Հանձնաժողովը, շուկայի կառուցվածքի վերակազմակերպումների, շուկայի զարգացման հետ զուգընթաց, իրավունք ունի Լիցենզիայում կատարել փոփոխություններ և լրացումներ:

10.2 Լիցենզավորված անձն իրավունք ունի ներքին շուկայի հագեցվածության դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին, առաջնայնության սկզբունքով, իր արտադրած էլեկտրական էներգիան արտահանելու նպատակով դիմել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ստանալու համար:
Համաձայն Արձանագրության 8-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության տարածքի էլեկտրահաղորդման մայրուղիներով արտահանում իրականացնելու դեպքում էլեկտրական էներգիայի փոխադրավճարը չպետք է գերազանցի ներքին սպառման համար էլեկտրական էներգիայի փոխադրավճարը:

10.3 Լիցենզավորված անձն իրավունք ունի կնքել այլ իրավաբանական անձանց (վերջիններիս կողմից արտահանման նպատակով) էլեկտրական էներգիայի գնման նախնական պայմանագիր (համաձայնագիր) կամ գնման վերաբերյալ մտադրությունների հուշագիր, կամ գնման վերջնական պայմանագիր, որն ուժի մեջ կհամարվի այդ իրավաբանական անձանց կողմից էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ստանալու պահից:

10.4 Լիցենզավորված անձն իրավունք ունի իր սեփական կարիքների համար ներկրել բնական գազ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով բնական գազի ներկրման լիցենզիա ստանալու դեպքում:
Համաձայն Արձանագրության 8-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրավճարը չպետք է գերազանցի ներքին սպառողների համար սահմանված վճարը:

11. Ծանուցում

11.1 Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով՝ պահանջելով ստացական: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ է համարվում ստացման պահից:

Լիցենզավորված անձի փոստային կարգաթիվը **378550**

Հասցեն **ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, փ.Գործարանային, Հրազդանի ՋԷԿ**

Անվանումը **«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն**

Տնօրենի (նախագահի) անունը, ազգանունը: **Արթուր Ալավերդյան**

Ի վկայություն սույնի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը Լիցենզիան տրամադրել է

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն

(ընկերության անվանումը)

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, փ.Գործարանային, Հրազդանի ՋԷԿ

(գտնվելու վայրը)

Գրանցման ամսաթիվը

«8 « նոյեմբերի 2004 թ.

Գրանցման համարը

№ 0145

Հանձնաժողովի պատասխանատու անձ՝_____ Ա.Վարդանյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի նոյեմբերի 8-ի N143Ա որոշմամբ
հաստատված լիցենզիայի պայմանների

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ

Լիցենզիա N0145

տրված է **«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն**
(լիցենզավորված ընկերության անվանումը)

Կայանի հիմնական արտադրող սարքավորումների ցուցակը

սարքավորումների (բլոկի) անվանումը և կայանային համարը	սարքավորման մակնիշը	սարքավորման նոմինալ հզորությունը կամ արտադրողա-կանությունը	շահագործման հանձնելու տարեթիվը
Շոգետուրբին N 1	ԿՁ -50-130 / 7	50 ՄՎտ	1966
Գեներատոր N 1	ՁԹՂ 60-2		
Շոգեկաթսա N 1	ըԽի - 320	320 տ/ժ	
Շոգետուրբին N 2	ԿՁ –50-130 / 7	50 ՄՎտ	1967
Գեներատոր N 2	ՁԹՂ 60-2		
Շոգեկաթսա N 2	ըԽի - 320	320 տ/ժ	
Շոգետուրբին N 3	Ձ-100-130	100 ՄՎտ	1969
Գեներատոր N 3	ՁԹՂ -100-2		
Շոգեկաթսա N 3	ըԽի - 320	320 տ/ժ	
Շոգետուրբին N 4	Ձ-100-130	100 ՄՎտ	1969
Գեներատոր N 4	ՁԹՂ -100- 2		
Շոգեկաթսա N 4	ըԽի - 320	320 տ/ժ	
Բլոկ N 1		200 ՄՎտ	1971
Շոգետուրբին N 1	Խ -200-130		
Գեներատոր N 1	ՁթԹ-200 Ծ		
Շոգեկաթսա N 1	ըԽի - 640	640 տ/ժ	
Բլոկ N 2		200	1971
Շոգետուրբին N 2	Խ -200-130		
Գեներատոր N 2	ՁթԹ-200 Ծ		
Շոգեկաթսա N 2	ըԽի - 640	640 տ/ժ	
Բլոկ N 3		200	1972
Շոգետուրբին N 3	Խ -200-130		
Գեներատոր N 3	ՁթԹ-200 Ծ		
Շոգեկաթսա N 3	ըԽի - 640	640 տ/ժ	
Բլոկ N 4		200	1974
Շոգետուրբին N 4	Խ -200-130		
Գեներատոր N 4	ՁթԹ-200 Ծ		
Շոգեկաթսա N 4	ըԽի - 640	640 տ/ժ	